ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԱԺ 2012 թ. մայիսի 6-ի ընտրությունների նախընտրական քարոզչության դիտորդական առաքելության առաջին միջանկյալ զեկույց

(ապիլի 8 – ապրիլի 25, 2012 թ.)

«2012 թ. խորհրդարանական ընտրությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կարողությունների զարգացում» ծրագիր

OPEN SOCIETY FOUNDATIONS
DEN NORSKE HELSINGFORSKOMITÉ
THE NORWEGIAN HELSINKI COMMITTEE
USAID FROM THE AMERICAN PEOPLE
COUNTERPART INTERNATIONAL

Բովանդակություն

Բովանդակություն 2
I. Ընդհանուր տեղեկություններ 3
II. Նախընտրական քարոզչության ընթացքում դիտարկված 4
խախտումները 4
III. Դիտորդական առաքելության իրականացման խոչընդոտները 5
Աղյուսակ 1 6
Հավելված 1: Լոռու մարզպետարանից նախընտրական քարոզչության ժամանակաընթացում արձակուրդի մեջ են գտնվող անձանց թիվը 7
Հավելված 2: Վանաձորի քաղաքապետարանից նախընտրական քարոզչության ժամանակաընթացում արձակուրդի մեջ են գտնվող անձանց թիվը 10
Հավելված 3: Վանաձորի քաղաքային համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր 13
Հավելված 4: Արձանագրած խախտումների լուսանկարներ 15

I. Ընդհանուր տեղեկություններ

1. 2012 թ. Մայիսի 6-ի ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզչության փուլում կազմակերպության 10 դիտորդներ երկարաժամկետ դիտորդական առաքելություն են իրականացնում Վանաձոր քաղաքում: Որոշ տեղեկություններ հավաքագրվում են նաև այլ մարզերում գործընկեր կազմակերպությունների միջոցով

2. Վանաձոր քաղաքում և Լոռու մարզում գրացված են մեծամասնական ընտրակարգով թվով 10 թեկնածուներ (թիվ 29 ընտրատեղամասում՝ 3 թեկնածու, թիվ 30 ընտրատեղամասում՝ 5 թեկնածու, թիվ 31-ում ՝ 2 թեկնածու):

3. Ըստ մեր դիտարկումների, 2012 թ. ապրիլի 25-ի դրությամբ նախընտրական շտաբներ ձևավորվել են բոլոր կուսակցությունների կողմից, որոնք միաժամանակ ծառայում են տվյալ կուսակցությունից մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների նախընտրական շտաբներ: Նախընտրական շտաբների թիվը ներկայացված է *աղուսյակ 1 –ում*:

4. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում տեղադրված Ընտրողների ռեգիստրից Վանաձոր համայնքում արձանագրվել են թվով 482 հասցեներ, որոնցից յուրաքանչյուրում հաշվառված են 10 - 61 ընտրող:

5. Ըստ Լոռու մարզպետարանից ստացված տվյալների նախընտրական քարոզչության ժամանակաընթացում արձակուրդի մեջ են գտնվում թվով 6 աշխատակիցներ (*տե՛ս հավելված 1*): Վանաձորի քաղաքապետարանից՝ թվով 22 աշխատակիցներ (*տե՛ս հավելված 2*):

6. Վանաձորի քաղաքապետի կողմից 2012 թ.-ի մարտի 7-ի թիվ 209 որոշմամբ սահմանվել են Վանաձորի քաղաքային համայնքի տարածքում քարոզչական *պաստառներ փակցնելու համար անվճար տեղերը (տե՛ս հավելված 3):*

7. Ըստ դիտարկման տվյալների գրեթե ոչ մի թեկնածու կամ կուսակցություն խնդիրներ կամ խոչընդոտներ չի ունեցել Վանաձոր քաղաքում նախընտրական քարոզչական նյութեր տարածելիս, պաստառներ փակցնելիս, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով եթերաժամանակ կամ դահլիճներ ստանալիս:

8. Բոլոր թեկնածուներն էլ նշել են, որ հիմնականում իրենց հանդիպումները տեղի են ունենում բացօթյա՝ բակային հանդիպումների տեսքով: Մինչ այժմ հարցված կուսակցություններից և թեկնածուներից միայն Վահագն Մարտիրոսյանն է

հայտնել, որ շտաբ բացելիս ՀԱԿ-ը խնդիրներ է ունեցել: Նա տեղեկացրել է, որ կոնկրետ Վանաձոր քաղաքում շտաբի տարածքներից մեկի վարձատուն հրաժարվել է տարածքը տրամադրել ՀԱԿ-ին՝ խախտելով նախօրոք ունեցած պայմանավորվածությունը: Այս խնդրին, թեկնածուի հավաստմամբ, կուսակցությունը բախվել է նաև այլ քաղաքներում և գյուղերում: Պատգամավորության թեկնածու Վահագն Մարտիրոսյանի կարծիքով պատճառը վախն է:

II. Նախընտրական քարոզչության ընթացքում դիտարկված խախտումները

1. Արձանագրվել են թեկնածուների և կուսակցությունների նախընտրական պաստառների օրենքով արգելված վայրերում փակցնելու դեպքեր՝ հասարակական սննդի, հասարակական առևտրի օբյեկտների և հասարակական տրանսպորտի վրա կամ ներսում (պատգամավորության թեկնածուներ Արկադի Համբարձումյան, Զոհրաբ Թորոսյան), (*տե՛ս հավելված 4*):

2. Արկադի Համբարձումյանի նախընտրական պաստառը փակցված է Սպիտակի տարածաշրջանի Կաթնաջուր գյուղի անունը կրող ցուցանակի վրա, որը գրեթե ամբողջովին ծածկում է գյուղի անվանումը:

3. Արկադի Համբարձումյանի նախընտրական պաստառը փակցված է Սպիտակ քաղաքի մուտքի մոտ «Բարի գալուստ Սպիտակ «կամարի վրա»:

4. Արձանագրվել են Հայաստանի Հանրապետական կուսակցության դրոշները հասարակական տրանսպորտի և Սպիտակ-Վանաձոր մայրուղու երկայնքով տեղակայված էլեկտրասյուների վրա ամրացնելու փաստեր:

5. Ըստ հավաքված տեղեկությունների ՀՀԿ շտաբի պետ է նշանակված Վանաձոր քաղաքի 7-րդ դպրոցի փոխտնօրենը:

6. Պատգամավորության թեկնածու Արկադի Համբարձումյանի ընտրողների հետ հանդիպումների ժամանակ ելույթներ են ունենում և թեկնածուին ընտրելու կոչ են անում դպրոցների տնօրենները և ուսուցիչները /օրինակ՝ թիվ 7, 30, 28 և 12 դպրոցների տնօրենները և ուսուցիչները/: (Հանդիպումների ժամանակ դպրոցի տնօրենների և ուսուցիչների կողմից հիմնականում ներկայացվում են թեկնածուի կողմից իրականացված բարեգործությունները): Մինչդեռ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին մասի համաձայն՝արգելվում է

նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝

պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս։

7. Թեկնածուներից երկուսը խնդիրներ են ունեցել՝ կապված նախընտրական քարոզչական պաստառների հետ. թիվ 30 ընտրատարածքում ինքնաառաջադրված պատգամավորության թեկնածու Էդմոն Մարուքյանի նախընտրական պաստառները պարբերաբար պատռվում են, որի կապակցությամբ թեկնածուն հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել:

8. Ըստ Թիվ 29 ընտրատարածքում առաջադրված պատգամավորության թեկնածու Վահագն Մարտիրոսյանի, նրա 5 պաստառներից մեկը «գողացել» են Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի Կաթնաջուր գյուղում:

III. Դիտորդական առաքելության իրականացման խոչընդոտները

1. Դիտորդական առաքելություն իրականացնելիս դիտորդների համար հիմնական խոչընդոտ է հանդիսացել թեկնածուների և կուսակցությունների նախընտրական շտաբների գտնվելու վայրի մասին տեղեկատվության բացակայությունը կամ համապատասխան կենտրոնական շտաբի կողմից այն չտրամադրելը:

2. Թեկնածուի կամ կուսակցության ընտրողների հետ հանդիպման ժամանակացույցի չտրամադրումը կամ դրանց բացակայությունը:

3. Պատգամավորության թեկնածու Վիկտոր Դալլաքյանի կողմից կազմակերպության հետ համագործակցության ցանկության բացակայությունը: Վ. Դալաքյանը հրաժարվել է պատասխանել կազմակերպության դիտորդի հարցերին և պահանջել է, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակից իրեն այլևս չանհանգստացնեն:

4. Պատգամավորության թեկնածու Վ. Դալլաքյանը փակ հանդիպում է ունեցել թիվ 1 դպրոցի ուսուցիչների հետ, կազմակերպության դիտորդին թույլ չի տրվել մասնակցել հանդիպմանը:

Աղյուսակ 1: Կուսակցությունների շտաբերի քանակը

	Կուսակցությունը	*Քանակը գլխավոր շտաբի տվյալներով*	*Քանակը ՀՔԱՎ-ի դիտարկման արդյունքում*
1	ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ		*23*
2	ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ		*1*
3	ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ		*7*
4	ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ		*20*
5	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ		*1*
6	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ		*1*
7	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ		*49*
8	ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ		*1*
9	ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ		*15*

Հավելված 1: Լոռու մարզպետարանից նախընտրական քարոզչության ժամանակաընթացում արձակուրդի մեջ են գտնվող անձանց թիվը

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2012- 06.04/ 09
06.04.2012 թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Արթուր Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե *մարզպետարանի աշխատակիցներից քանի հոգի են 2012 թ. ապրիլի 8-ից մինչև մայիսի 6-ը գտնվում արձակուրդում:*

Խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել ըստ արձակուրդում գտնվող անձանց անուն ազգանունների և զբաղեցրած պաշտոնների:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1
☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ 101/114.3/2008-12
« 12 » 04 2012 թ.

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Ձեզ եմ տրամադրում տեղեկատվություն 2012թվականի ապրիլի 8-ից մինչեւ մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում արձակուրդում գտնվող ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակիցների մասին՝ առ 11.04.2012թ:

Առդիր՝ 1 էջ:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ց Ո Ւ Ց Ա Կ

08.04.2012թ.-ից մինչեւ 06.05.2012թ. արձակուրդում գտնվող
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակիցների

1. Արթուր Նալբանդյան	-ՀՀ Լոռու մարզպետ	02.04.2012-06.05.2012
2. Էդիկ Կարախանյան	-ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ	10.04.2012-09.05.2012
3. Անահիտ Բարոյան	-ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության առաջատար մասնագետ	20.03.2012-19.04.2012
4. Սամվել Մակարյան	-ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ	02.04.2012-27.04.2012
5. Արա Թորոսյան	-Սպիտակի ՍԾՏԳ առաջին կարգի մասնագետ	10.042012-25.04.2012

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 2: Վանաձորի քաղաքապետարանից նախընտրական քարոզչության ժամանակաընթացում արձակուրդի մեջ են գտնվող անձանց թիվը

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2012- 06.04/[illegible]
06.04.2012 թ.

Վանաձոր համայնքի ղեկավար
Սամվել Դարբինյանին

Հարգելի պարոն Դարբինյան

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե. *քաղաքապետարանի աշխատակիցներից քանի՞ հոգի են 2012 թ. ապրիլի 8-ից մինչև մայիսի 6-ը գտնվում արձակուրդում:*

Խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել ըստ արձակուրդում գտնվող անձանց անուն ազգանունների և զբաղեցրած պաշտոնների:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2001 Վանաձոր, Հայքի հրապարակ
E-mail: vanadzorcity @mail.ru
Հեռ. 4-45-33, 2-26-48
Ֆաքս / Fax 2-22-50

ՕՀՊ N. 1736 « 16 » ապրիլի 2012թ

Ձեր N. Ե/2012-06.04./108 առ « 06 » 04 2012թ.

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

Ձեզ է ներկայացվում 2012թ. ապրիլի 8-ից մինչև մայիսի 6-ը արձակուրդում գտնվող քաղաքապետարանի աշխատակիցների ցուցակը:

Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

կատ.՝ Գ.Սիմոնյան
հեռ. 2-22-50

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2012 թ. ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱԿՈՒՐԴՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

Ց Ո Ւ Ց Ա Կ

Դարբինյան Սամվել – համայնքի ղեկավար – 16.04-20.04
Պապանյան Տիգրան –ճարտարապետության և - քաղաքաշինության բաժնի պետ -2012թ.մարտի 5-ից մինչև ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման օրը,իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում մինչև դատական ակտի հրապարակման օրը
Մակասյան Բարսեղ- ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման բաժնի պետ - 2012թ.մարտի 5-ից մինչև ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման օրը,իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում մինչև դատական ակտի հրապարակման օրը
Գրիգորյան Կարեն – ՍԾՎՏ բաժնի պետ - - 2012թ.մարտի 5-ից մինչև ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման օրը,իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում մինչև դատական ակտի հրապարակման օրը
Նալբանդյան Անիկ_ Ֆինանսական բաժնի գլղավոր մասնագետ – 20.03-20.04.2012թ.
Ավետյան Տաթևիկ -ծրագրերի և արտաքին հարաբերությունների բաժնի առաջատար մասնագետ -20.03- 12.06
Հարությունյան Կարինե – ԳԿ և ԵՀ բաժնի առաջատար մասնագետ - 02.04-08.05
Եղոյան Արմեն - ,, -- ----- -- - 02.04-08.05
Վարդանյան Էմմա - առևտրի սպասարկման և տրանսպորտը համակարգող բաժնի գլխավոր մասնագետ - 02.04-08.05
Մելքոնյան Արամայիս- իրավաբանական բաժնի գլխ. մասնագետ 02.04-08.05
Պապանյան Նորայր - ՃՔ բանի առաջատար մասնագետ 10.04-26.04
Ժամհարյան Ալբերտ - ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման բաժնի գլխ.մասնագետ 10.04-16.05
Մկրտչյան Նունե –կոմունալ տնտ.բաժնի 2-րդ կարգի մասնագետ 10.04-16.05
Թանդիլյան Սուսաննա-ՃՔ բաժնի գլխավոր մասնագետ 04.04-08.05
Վաթինյան Մեդորա – ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ 13.04-26.04
Ավագյան Էդուարդ -ԳԿ և ԵՀ բաժնի պետի տեղակալ 16.04-20.04
Պալյան Ասյա -ֆինանսականբաժնի առաջին կարգի մասնագետ 16.04-30.04
Պողոսյան Անահիտ- ՍԾՎՏ բաժնի գլխավոր մասնագետ 10.04-27.04
Գրիգորյան Անահիտ- ,, .. առաջատար մասնագետ 04.04-18.04
Ավետիքյան Վարդանուշ - հավաքարար 20.03-16.04
Զատիկյան Սուսաննա - հավաքարար 16.04-17.05
Քոչարյան Ստյոպա - պահակ 29.03-27.04

Հավելված 3: Վանաձորի քաղաքային համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzorcity@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մարտի 2012թվականի N 209

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների /կուսակցությունների, դաշինքների/ քարոզչական պաստառները փակցնելու համար Վանաձորի քաղաքային համայնքի տարածում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

N	ՇԵՆՔԻ ՀԱՍՑԵ	ՊԱՏԻ ԴԻՐՔԸ	ՄԱԿԵՐԵՍԸ
1	2	3	
1.	Գր.Լուսավորչի փողոց թիվ 14	հյուսիսային պատի արևմտյան մաս	6.0քմ
2.	Բնայոյի փողոց թիվ 4	արևմտյան պատի հյուսիսային մաս	6.0քմ
3.	Բաղրամյան պողոտա թիվ 74	շենքի արևմտյան ճակատ	6.0քմ
4.	Շիրակացու փողոց թիվ 2	արևմտյան պատի հյուսիսային մաս	6.0քմ
5.	Թևոսյան փողոց թիվ 13ա	շենքի հարավային ճակատ	6.0քմ
6.	Նարեկացու փողոց թիվ 47	շենքի հարավային պատի արևելյան մաս	6.0քմ
7.	Նարեկացու փողոց թիվ 58	շենքի արևելյան ճակատ	6.0քմ
8.	Սարի թաղ 1-ին փողոց թիվ 1 տուն	արևմտյան ճակատ	6.0քմ
9.	Ուկրշին տնակային ավան	թիվ 14 տան պատին	6.0քմ
10.	Տարոն-1 թիվ 3	շենքի հարավարևմտյան ճակատ	6.0քմ
11.	Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 77	շենքի հարավային ճակատ	6.0քմ
12.	Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 1	շենքի արևելյան ճակատ	6.0քմ
13.	Տարոն-2 ՔՇՀ-4 թիվ 1	շենքի արևելյան ճակատ	6.0քմ
14.	Տարոն-2 ՔՇՀ-7 թիվ 7	հարավային պատին	6.0քմ
15.	Տարոն-4 Մ/Մ թիվ 52գ	հյուսիսային պատին	6.0քմ
16.	Տարոն-4 Կանակա թիվ 27	արևելյան պատին	6.0քմ
17.	Երևանյան խճ. թիվ 175բտ	արևմտյան պատ	6.0քմ
18.	Երևանյան խճ. թիվ 94	հյուսիսային պատ	6.0քմ
19.	Երևանյան խճ. թիվ 129	հարավային պատ	6.0քմ
20.	Չուխաջյան փողոց թիվ 34	հարավային պատ	6.0քմ

21.	Չուխաջյան փողոց թիվ 6	արևմտյան պատ	6.0քմ
22.	Երևանյան խճ. թիվ 68	հյուսիսային պատ	6.0քմ
23.	Երևանյան խճ. թիվ 62	հյուսիսային պատ	6.0քմ
24.	Ներսիսյան փողոց թիվ 1	հարավային պատ	6.0քմ
25.	Աղայան փողոց թիվ 67	հարավային ճակատ	6.0քմ
26.	Աղայան փողոց թիվ 78	հյուսիսային ճակատ	6.0քմ
27.	Աղայան փողոց թիվ 74/1	հյուսիսային ճակատ	6.0քմ
28.	Ստեփանյան փողոց թիվ 13 տուն	հարավային ճակատ	6.0քմ
29.	Ներսիսյան թաղ. թիվ 1	արևմտյան պատ	6.0քմ
30.	Կնունյանց փողոց թիվ 2	հարավ-արևմտյան ճակատ	6.0քմ
31.	Կ.հալաբյան փողոց թիվ 3 տուն	հարավային ճակատ	6.0քմ
32.	Աղայան փողոց թիվ 59/1	հարավային ճակատ	6.0քմ
33.	Նար-Դոսի փողոց թիվ 28 տուն	հյուսիսային ճակատ	6.0քմ
34.	Զոր.Անդրանիկի փողոց թիվ 99	արևմտյան պատ	6.0քմ
35.	Զոր.Անդրանիկի փողոց թիվ 58	հյուսիսային պատ	6.0քմ
36.	Աբովյան փողոց թիվ 64	արևելյան պատի հյուսիսարևելյան անկյուն	6.0քմ
37.	Մյասնիկյան փողոց թիվ 23	արևմտյան պատի հյուսիսային մաս	6.0քմ
38.	Տիգրան Մեծի պող թիվ 46	արևմտյան պատի հարավային մաս	6.0քմ
39.	Գր.Լուսավորչի փողոց թիվ 53	հարավային պատի հարավ արևելյան մաս	6.0քմ
40.	Գր.Լուսավորչի փողոց թիվ 54	արևելյան պատի հյուսիսային մաս	6.0քմ
41.	Նժդեհի փողոց թիվ 19	արևելյան պատի հարավային մաս	6.0քմ
42.	Տիգրան Մեծի պող. թիվ 24	հյուսիսային պատի արևելյան մաս	6.0քմ
43.	Նժդեհի փողոց թիվ 7	արևմտյան պատի հարավային մաս	6.0քմ
44.	Գր.Լուսավորչի փողոց թիվ 49	հարավային պատի արևմտյան մաս	6.0քմ
45.	Գր.Լուսավորչի փողոց թիվ 34	հյուսիսային պատի հարակից հենապատ	6.0քմ
46.	Գր.Լուսավորչի փողոց թիվ 29	հարավային պատի արևմտյան մաս	6.0քմ
47.	Տիգրան Մեծի պող. թիվ 10	արևմտյան պատի հյուսիսային մաս	6.0քմ
48.	Գր.Լուսավորչի փողոց թիվ 18	արևմտյան պատի հարավային մաս	6.0քմ
49.	Բաթումի փողոց թիվ 15	հյուսիս-արևմտյան պատի անկյուն	6.0քմ
50.	Վ.Համբարձումյան փողոց թիվ 11	արևմտյան ճակատ	6.0քմ
51.	Սուխումի փողոց թիվ 3	հարավային ճակատ	6.0քմ
52.	Սուխումի փողոց թիվ 14	հարավային ճակատ	6.0քմ
53.	Վ.Համբարձումյան փողոց թիվ 8	արևմտյան ճակատ	6.0քմ
54.	Շինարարների փողոց թիվ 21/1	հյուսիսային ճակատ	6.0քմ
55.	Աղայան փողոց թիվ 94	հյուսիսային ճակատ	6.0քմ
56.	Իսահակյան փողոց թիվ 2	արևելյան ճակատ	6.0քմ
57.	Ուսանողական փողոց թիվ 8	հյուսիսային ճակատ	6.0քմ
58.	Աղայան փողոց թիվ 88	հյուսիսային ճակատ	6.0քմ

2. Սույն որոշման օրինակն ուղարկել կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՐԲԻՆՅԱՆ

ճիշտ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված 4: Արձանագրած խախտումների լուսանկարներ



նկ.1. հասարակական առևտրի օբյեկտի վրա

նկ. 2. հասարակական առևտրի օբյեկտի վրա

նկ. 3. հասարակական առևտրի օբյեկտի վրա

նկ. 4. հասարակական տրանսպորտի վրա

նկ. 5. պետական կրթական հատատության վրա

նկ. 6. հասարակական առևտրի օբյեկտի վրա

նկ. 7. հասարակական առևտրի օբյեկտի վրա

նկ. 8. հասարակական տրանսպորտի վրա



նկ. 9. հասարակական սննդի օբյեկտի վրա

նկ. 10. հասարակական առևտրի օբյեկտի վրա

նկ. 11. Անկուսակցական Էդմոն Մարուքյանի պատռված քարոզչական պաստառները

նկ. 12. ՀՀԿ դրոշի տեղադրում Վանաձոր Սպիտակ ճանապարհի էլեկտրասյուներին